ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

7 հուլիս, 2023 թվականի № 47-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի № 40-Լ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով և 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և հաշվի առնելով «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունը և Ընկերության գործադիր տնօրենի կողմից 2023 թվականի հունիսի 15-ին Հանրային հեռարձակողի խորհրդին ներկայացված № Հ.Մ./02-157/23 գրությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել Ընկերության ղեկավար պաշտոն զբաղեցնող աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն սույն որոշման հավելված № 1-ի:

2. Հաստատել Ընկերության ղեկավար պաշտոն չզբաղեցնող աշխատողների հետ կնքվող աշխատանքային պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն սույն որոշման հավելված № 2-ի:

3. Հաստատել Ընկերության աշխատողների հետ կնքվող անհատական լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն սույն որոշման № 3 հավելվածի:

4. Սահմանել, որ Ընկերության և աշխատողի փոխադարձ համաձայնությամբ պայմանագրում կարող են ներառվել նաև կիրառելի օրենսդրությանը չհակասող այլ դրույթներ:

5. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2017 թվականի օգոստոսի 31-ի «**ERROR! NOT A VALID LINK.**» № 40-Լ որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հուլիսի 31-ին:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

7 հուլիս, 2023 թվականի

ք. Երևան